№ 109 Յունիսի 17 (29) 1881 Յունիսի 17 (29) № 109

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաստանցիներ գիմում են հղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլգարիա. Անգլիա. Գերմանիա. Ֆրանսիա. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

12 յունիսի

Զը նայելով որ Ղարաբաղի ազգաբնակութեան մի ստուար մասը զարաւում է միայն շերամապահութեամբ, չը նայելով որ այս կողմերում տասնեակ տարիներ կան, որ 30-ի չափ մետաքսեայ գործարաններ բանում են, սակայն շերամապահութեան արհեստը ամենևին չէ կատարելագործված այս կողմերում. շերամները գլխաւորապէս լինում են բայօթեայ առանց ծածկոցի, որոնց լաւութիւնը կամ փչանալը, կախված է եղանակից. Այս տարի անընդհատ անձրևները կատարեալ վնաս հասցրին շերամապահներին, որոնցից ոչ մէկը կարող չեղաւ իր սպասածի $^1/_8$-ն անգամ ստանալու, ուրեմն կասկած չունենք, որ մեր գործարանատէրերից մեծ մասը ստիպված կը լինեն փակելու իրենց գործարանները. Ֆրանսիայի պարոն Լէրիսէի փորձերը հին Իտալիայի բոժոժի մեր կողմերում ուսնեցած արդիւնաբերութիւնը վերականգնելու համար, դարձեալ ապարդիւն անցկացան գլխաւորապէս այն տարուան եղանակի ցրտութեան պատճառով.

Թէ ինչքան անհրաժեշտ է միջոցներ գործ դընել մեր կողմերի շերամապահութեան արհեստը կատարելագործելու, այդ ես թողում եմ ընթերցողի դատողութեանը. Երևակայեցէք մի գիւղական ընտանիք, որ իր ամբողջ յոյսը դրել է իր այն տարուայ բերքի վրա, որով միայն կարողանում է իր օրական ապրուստը հայթայթել, իսկ այդ փչանալուց յետոյ նա ստիպված է ապրել ամենայնտին չքաւորութեան մէջ. Երկրորդ բերքերի այդպիսով փչանալը կամ լաւ չը լինելը մեծ վնասներ է պատճառում և այն վաճառականներին, որոնք ունեն գործարաններ, որոնք 100,000-ներով գումարներ մտցնում են այդ գործի մէջ իւրաքանչիւր տարի և իրենց արտադրած մետաքսը չէ կարողանում մրցել Ֆրանսիայի ազնիւ մետաքսի հետ.

Եթէ անձրևները բաւական վնասեցին այս տարուան բոժոժի բերքերին, ընդհակառակը շատ նպաստաւոր եղան ցորենի և գարու արտերին, որոնք մի առատ հունձք խոստանում են ապագային և աւելի էժանութիւն.

Մի քանի թուրք բաղդախնդիրներ դեռ անցեալ տարուանից ամբարած ունէին բաւական ցորեն և գարի և սպասում էին դների բարձրանալուն. սակայն այժմ ստիպված են ամենաէժան գներով վաճառել.

Աբէլ Ապրէսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մեծ-Ղարաքլիս, 6 յունիս

«Մշակի» 97 համարի առաջնորդող յօդուածը, որը վերաբերում էր մեզ, թղթակիցներիս, կարդացի ամենայն համակրութեամբ. Շատ ճշմարիտ է ձեր ասածը, որ թղթակիցները մեծ մասամբ գրում են դպրոցների, հոգաբարձուների, քահանաների... վրա. Բայց ինչ անես, որ ես փորձով, փաստերով գիտեմ և համոզված եմ, որ եթէ լրագրութիւնը դադարի մտրակել հոգաբարձուներին, վարժապետներին, այն ժամանակ մեր դպրոցները երբէք առաջադիմութիւն չեն ունենայ. Առ այժմ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, մինչև հոգաբարձուներին չը մտրակես կամ չը խրախուսես, նրանք ոչինչ չեն անի. Ինչքան էլ որ անում են, դարձեալ նրա համար որ լրագրութեան մէջ խայտառակ չանեն իրանց. Եթէ համոզված լինէին, որ իրանց գործունէութեանց վրա լրագրում երբէք խօսող չը պիտի լինի, մի տարվայ մէջ դպրոցները քար ու քանդ կանեն. Այսպիսի պաշտօնակատարները դժուխքից այնքան չեն վախում, որքան լրագրութեան մտրակից, որ ժամանակ առ ժամանակ արթնացնում է այդպիսի քնած և անբարեխիղճ պաշտօնակատարներին. Ն.

Ես աւելորդ ուշադրութիւն կը դարձնեմ այն կէտերի վրա, որոնք ձեր առաջնորդող յօդուածում առաջարկում էք ձեր թղթակիցներին. բայց մի և նոյն ժամանակ չեմ կարող ուշադրութիւն չը դարձել այն անխիղճ հոգաբարձութեան, խաբեբայ վարժապետների վրա, որոնք ազգի դառն քրտինքով վաստակած փողերը անխղճաբար իմ աչքի առաջ լափում են և միամտներին խաբում զանազան խարդախ ճանապարհով. Հազարաւոր օրինակներից միայն երկուսը ասենք. Ղարաքիլիսի դպրոցը 20 տարի է գոյութիւն ունի, երեք տարի է, որ նոր մեծածախս դպրոցը վերջացրել են. 20 տարվայ ընթացքի մէջ ոչ հոգաբարձութիւնն է հաշիւ տուել հասարակութեան, և ոչ վարժապետները՝ իրանց տարեկան գործունէութեանց մասին. Հասարակութիւնից ոչ ոք չէ իմանում թէ իրանց դպրոցը տարեկան ինչքան ծախս ունի, ինչքան փող ունի, ինչքան մուտք, որքան դրամագլուխ, ում ձեռքն են այդ փողերը. Մինչև որ լրագրութիւնը չը խօսի, ժողովուրդը չի արթնանայ և հոգաբարձութիւնը հաշիւ չի տայ և մի օր դպրոցը մնանկացած կը հրատարակվի.— Հոգաբարձութեան ժամանակը մի տարի է անցել է, ոչ դուրս են գալիս ասպարիզից, ոչ գործում են և ոչ ուրիշին են յանձնում. մինչև լրագրութիւնը չը խօսի, չարթնացնի ժողովրդին, ոչ ժողով կազմող կը լինի և ոչ հոգաբարձու ընտրող. Վերջապէս, իմ կարծիքով, առանց լրագրի բերանով վատերին մտրակելու, լաւերին խրախուսելու, մեր դպրոցների կեանքը վտանգի մէջ է. Թէ «Մշակը» որքան ազդեցութիւն է անում մեր ընթերցող հասարակութեան վրա և որքան օգուտներ է տալիս մեր դպրոցներին, ես կը բացատրեի օրինաւոր փաստերով, եթէ միայն տեղ լինէր «Մշակի» էջերում. Այն ժամանակ կարդացնէիք ձեր այն թղթակիցներին, որոնք շատ անգամ բարեկարգութեանց խնդրոյն մէջ Դրան զօրաւոր նեցուկ մը ընելու համար. Բարձրաստիճան տաճկաց ոմանց բերնէն ելած խօսքերն այս կարծիքը կը հաստատեն. Շէյխը ինքնին դեսպանաց պիտի հասկցնէ եղեր թէ՝ քիւրդ ժողովուրդը (?) երբէք չը պիտի կրնայ ներել որ Եւրոպիոյ շնորհիւ հայք առանձնաշնորհեալ դիրք մը ստանան Հայաստանի մէջ. որոյ հետևութիւնը ուրիշ բան չը պիտի ըլլայ, բայց եթէ քիչ ժամանակի մէջ քիւրդերու ոչնչանալը. հետևաբար ինչ որ ալ ըլլայ, իրենք պիտի դիմադրեն, և տաճկաց դաշնակցութիւնը իրենց հետ է. Անցեալ օր թիւրք զինուորական մը, որ Հայաստան երկար ատեն պաշտօն վարած է, կըսէր «Եթէ դուք թուղթերու ապաւինած էք, խլամք տուրի կոթնած են»—և իրաւունք բիրտ զօրութիւնը բաւական չարիքներ պատրաստ կը պահէ մեզ. Արդեօք դեսպանաց ամենուն անկեղծութիւնը վստահ ենք, և չը պիտի գտնուին այս արիւնահեղութեան վտանգը պատճառ բռնելով մեզ խաղ-խաղցողներ. Տեսնենք. երբէք այսքան փափուկ վիճակի մէջ գտնուած չէինք.

Երկու երեք օր է մեր գրական հրապարակն ալ բաւական չփոթութեան մէջ է. մեր գրագէտներուն համար նմանը դեռ չը տեսնուած դէպք մը պատահեցաւ. Պ. Նիկողոսեան մենամարտութեան կը հրաւիրէ Թէրճիմանէ-ֆքեարի մէջ իրեն դէմ նախատական լեզու գործածող պարոնը, որ Պ ո լ ս ե ց ի կը ստորագրէ.—

Քանի որ պ. Նիկողոսեան Կ. Պոլիս է, շարք մը յօդուածներ կը հրատարակէ նախ «Մասիսի», ապա Մանզումէի և Հայրենիքի մէջ. Մեզ համար այս յօդուածները շատ հետաքրքրական էին և կարևորութիւն ունէին, վասն զի հեռուէն մեր մէջ եկած հայու մը վրա ինչ տպաւորութիւն ըրած ըլլալնիս կուզէինք տեսնել, և շատ բաներ որ սովորութիւն ըլլալով մեր աչքին չէր զարներ, բոլոր իր պարզութեամբը կրնար նորա աչքին զարնել. Այդ յօդուածները մեծ արձագանք գտան, որք Հայաստանի վերածնունդը փութացնելու կենսական հարցերու վրա էին. Յօդուածներին իրենց հակառակորդներն ունեցան, բայց պաշտպաններն շատ մեծ էին ու մի քանիները «Մշակի» մէջ արատապուած տեսանք, և չուտ միւսներն ալ կարտատպուին, և Ռուսաստանի հայք ալ կրնան դատել թէ իրենց հայրենակիցը ինչպիսի գովելի տեսակէտներով գրիչ կը շարժէ.—Արդարև պ. Նիկողոսեանի յօդուածներուն մէջ կան գաղափարներ, որք կրնան քննադատութեանց առարկայ ըլլալ, և մենք իսկ կուզէինք քանի մը կէտերուն վրա խօսել, բայց այնքան չուտ առաջ կերթան գործերը, որ ժամանակնիս չը ներեց.—Ինչ որ ալ ըլլան քննադատելի կէտերն, պ. Նիկողոսեանի յօդուածները լուրջ նկատողութեան առնելու արժանի են, ինչպէս «Մշակ» ալ ըրաւ.— Կ. Պոլսոյ մէջ քննադատները չուզեցին, ըսենք թէ կարող չեղան, խելացի կերպով դատել և հերքել. մի քանի տկար կէտերու վրա բոլոր ուժերնին թափելնին մեծ բան չէ.— Պ. Նիկողոսեան երբեմն այնպիսի լեզու կը գործածէ, որ վ. ոսփորի ներդաշնակութիւն սիրող նուրբ ու փափուկ ականջներու շատ տիրոջելի չը հնչեր. Crime lèse-harmonie. — Պարոնին մէկը բիւզանդական հայոց նուրբ ցասմանը թարգման կը հանդիսանայ, և Թէրճիմանը-էֆքեար հայատառ թրքալեզու թերթին մէջ կը յարձակի պ. Նիկողոսեանին դէմ, նորա անձնականութիւնը անպատուեր ու նախորդ օրէն Թէրճիման կը յայտարարէր, թէ երկրորդ օրը այսպիսի յօդուած մը պիտի հրատարակէ. Պ. Նիկողոսեան նախապէս իր այցետոմսին վրա երկու տողով կը հաղորդէ խմբագրութեան, որ սկզբունքներու համար կըրնան իրեն դէմ գրել, սակայն ուղղակի իր անձին դէմ և անհատականութեանը դպչող բացատրութիւններու ներողամիտ պիտի չը գտնուի. Կերևի թէ այս աղդարարութեան վրա նամակին ոճը կը փոխուի. բայց ինչ որ անբացատրելի է այդ լոկ անձնական երկտող Թէրճիմանի մէջ հրատարակեալ տեսնելնիս էր.— Պ ո լ ս ե ց ի ստորագրութեամբ պ. Նիկողոսեանի դէմ գրուած նամակը իր բացագանչութիւններովը և գռեհիկ ոճովը կարևորութիւն մը չէր ստանայ բնականապէս.— Թէրճիմանի խմբագրութիւնը զանազան անգամներ պ. Նիկողոսեանի դէմ փոքրիկ սիւներ կը հրատարակէր և մեծ խնամքով կը ժողվէր ու կարտատպէր նորա դէմ գրուած